ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիա

Բովանդակություն

Ողջույնի խոսք

«Արիմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար Հայաստանի առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության անդամների համար

Աշխատանքի միջազգային կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գրասենյակի աշխատավորների գործունեության ավագ մասնագետ Գոչա Ալեքսանդրիայի և Շվեյցարիայի արիմիությունների կոնֆեդերացիայի կենտրոնական քարտուղար-միջազգային հարաբերությունների ղեկավար Լուկա Չիրիլիանոյի այցելությունը Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիա

Երևանի քաղաքապետարանի պատասխանը ՀԱՄԿ-ի՝ հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման վերաբերյալ գրությանը

«Արիմիութենական սպորտ 2024» խորագրով արիմիութենական-սպորտային միջոցառում

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանը ՀԱՄԿ-ի կողմից բարձրաձայնված կենսաթոշակառուների իրավունքների վերաբերյալ գրությանը

Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիայի հայտարարությունը Երևանում հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման վերաբերյալ

«Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ» «Արհեստակցական միությունների մասին», « Գործատուների կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների նախագծերի քննարկում

Բովանդակություն

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի այցը Հադրութի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն

Քաղաքացիական ներգրավման հասարակության տարածաշրջանային մեխանիզմ քաղաքացիական հասարակության հարթակի 2024 թվականի ֆորումին մասնակցություն

ՄԱԿ եվրոպական տնտեսական հանձնաժողովի Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) տարածաշրջանային ֆորումին մասնակցություն

ԵՄ- Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի 4-րդ հանդիպում

ԱՄԿ Աշխատավորների գործունեության բյուրոյի (ԱԿՏՐԱՎ) և Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի աշխատանքի անվտանգության փորձագետների հանդիպում

«Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար Կրթության և գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության Արաբկիրի տարածքային կրթության և գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպության անդամների համար

ԱՄԿ-ն պաշտոնապես համաձայնվել է կենսապահովման աշխատավարձի սահմանման հետ, որը Նոր սոցիալական պայմանագրի էական մասն է, որպեսզի վերաձևավորի համաշխարհային տնտեսությունը՝ ծառայելու աշխատավոր մարդկանց շահերին

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի խորհրդի նիստ

Բարի գալուստ,
«Արհմիութենական անցուդարձ» ամսագիր

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրը հանդիսանում է Հայաստանում արհմիութենական առաջին էլեկտրոնային ամսագիրը, որի նպատակն է տարածել և հանրահռչակել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը: Արհմիութենական առօրյան հարուստ է բազմազան միջոցառումներով, ծրագրերով, որոնք ուղղված են աշխատողների իրազեկմանը, աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական, տնտեսական, մասնագիտական իրավունքների ներկայացմանը, պաշտպանմանը և առաջ մղմանը:

Մենք վստահ ենք՝ այսօր ժամանակակից աշխարհում ամենազորեղ զենքը գիտելիքն է և տեղեկտավության տարածումը:

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիայի աշխատակազմ

«Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար Հայաստանի առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության անդամների համար

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականի մարտի 2-ից մինչև 2024 թվականի մարտի 3-ը Ծաղկաձորում տեղի ունեցավ «Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար Հայաստանի առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության անդամների համար։

Աշխատանքի միջազգային կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գրասենյակի աշխատավորների գործունեության ավագ մասնագետ Գոչա Ալեքսանդրիայի և Շվեյցարիայի արհմիությունների կոնֆեդերացիայի կենտրոնական քարտուղար-միջազգային հարաբերությունների ղեկավար Լուկա Չիրիլիանոյի այցելությունը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Աշխատանքի միջազգային կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գրասենյակի աշխատավորների գործունեության ավագ մասնագետ Գոչա Ալեքսանդրիան և Շվեյցարիայի արհմիությունների կոնֆեդերացիայի կենտրոնական քարտուղար-միջազգային հարաբերությունների ղեկավար Լուկա Չիրիլիանոն 2024 թվականի մարտի 5-ին ճանաչողական այց են կատարել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա, որի ընթացքում հանիդպել են Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ղեկավարների և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի մշտական գործող հանձնաժողովների անդամների հետ: Այցելության ընթացքում քննարկվել են երկու կոնֆեդերացիաների համագործակցության հնարավորությունները:

Երևանի քաղաքապետարանի պատասխանը ՀԱՄԿ-ի՝ հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման վերաբերյալ գրությանը

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ, 0015, ք. Երևան, Աբովյանի 1

№ 03.2/35596-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ
ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Մանասերյան,

Ի պատասխան Երևանի քաղաքապետին հղված Ձեր 16.02.2024թ. թիվ 05-01/5 գրության՝ տեղեկացնում եմ, որ տրանսպորտային համակարգի համալիր բարելավման ծրագրով նախատեսված է շարժակազմի ամբողջական բարելավում, երթուղիների փոփոխություն, ինչպես նաև միասնական տոմսային համակարգի ներդրում, որտեղ կիրառվելու են տարատեսակ տոմսային կրիչներ և ճկուն տոմսային փաթեթներ՝ տարբեր խմբերին պատկանող ուղևորների պահանջները բավարարելու համար:

Տոմսային փաթեթների (տարիֆային պլանների) գնային քաղաքականությունը դեռ քննարկման փուլում է: Ձեր դիմումը ևս կդիտարկվի այդ քննարկումներում:

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Ս.Մանուկյան
«Երևան քաղաքի կառավարման
տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ
Հեռ.՝ 011-514-700

Արիմիութենական սպորտ 2024

Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիան մարտի 7-10-ը Ծաղկաձորում կազմակերպել է «Արիմիութենական սպորտ 2024» խորագրով արիմիութենական-սպորտային միջոցառում:

«Արիմիութենական սպորտ 2024» միջոցառմանն ընդառաջ Կենտրոն հեռուստաընկերության «Կենտրոնի առավոտը» հաղորդմանը հյուրընկալվել էր Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյան, ով խոսել է միջոցառման և արիմիությունների գործունեության մասին:

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը
https://rb.gy/bxjcom

«Արիմիութենական սպորտ 2024» խորագրով արիմիութենական-սպորտային միջոցառման ընթացքում իրականացվեցին մրցույթներ հինգ սպորտային անվանակարգերում՝ սեղանի թենիս, շախմատ, բազկամարտ, բոուլինգ և դարթս: Սպորտային միջոցառումներից զատ առավոտները հագեցած էին արիմիութենական թեմաներով մի քանի զրուցարաններով, հրավիրված էին ոլորտին և խնդիրներին քաջածանոթ հյուրեր: Մասնավորապես, երեք օրերի ընթացքում ներկայացվեց, թե որքանով են Հայաստանում խախտվում աշխատանքային իրավունքները և ինչ է պետք անել նման խնդիրներից խուսափելու համար, ինչ գիտելիքներ են պետք աշխատողին սեփական սոցիալական երաշխիքների բավարարման համար, որոնք են աշխատավայրում առողջ և անվտանգ պայմանների պահպանման գործում մեր երկրում առկա առանցքային խնդիրները և այլ արդիական թեմաներ:

Միջոցառմանը մասնակցել են ավելի քան 130 արիմիութենականներ: Առաջին տեղը գրավածների մեդալների հաշվարկով արիմիութենական գավաթը իրենց հետ տարան առաջին տեղը գրաված Բուհերի ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչները:

Պարգևատրման արարողությանը ներկա էին Շախմատի ակադեմիայի հիմնադիր նախագահ Սմբատ Լպուտյանը, սեղանի թենիսի ֆեդերացիայի նախագահ Ֆելիքս Սարգսյանը, բազկամարտի ֆեդերացիայի նախագահ Արսեն Գաբրիելյանը, մարզական մեկնաբան Ռուդիկ Բարսեղյանը:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից պատրաստվել է «Արհմիութենական սպորտ 2024» խորագրով արհմիութենական-սպորտային միջոցառման ամփոփիչ տեսնայուք։
Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևյելով հղմանը
https://rb.gy/utx21e

2024 թվականի մարտի 12-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը հյուրընկալվեց Արմենիա հեռուստաընկերության Բարի Լույս հաղորդման կողմից։ Էլեն Մանասերյանը խոսել է «Արհմիութենական սպորտ 2024» խորագրով արհմիութենական-սպորտային միջոցառման կազմակերպման և արդյունքների մասին։
Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևյելով հղմանը
https://rb.gy/zc5c7x

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանը ՀԱՄԿ-ի կողմից բարձրաձայնված կենսաթոշակառուների իրավունքների վերաբերյալ գրությանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« » 2024 թ. N

Ձեր 01.02.2023 թ.
թիվ 05-01/8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻՆ

elenmanaseryan1@gmail.com

Հարգելի՛ տիկին Մանասերյան,

Գրության կապակցությամբ հայտնում եմ, որ Սահմանադրության (2015 թվականի խմբագրությամբ) «Յուրաքանչյուր ոք, **օրենքին համապատասխան,** ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»:

Աշխատանքային կենսաթոշակներին առնչվող հարաբերությունները կարգավորվում են «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) : 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն կենսաթոշակի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, վերջին անգամ բանկ ներկայանալու (կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին:

Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակ վճարելը դադարեցվում է Օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու) դեպքում:

Նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ վերը նշված հիմքով կենսաթոշակ վճարելը դադարեցված լինելու դեպքում կենսաթոշակ վճարելը վերսկսվում է դիմելու (անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունն ստացվելու) ամսին հաջորդող ամսվա 1-ից, եթե կենսաթոշակառուն գրավոր դիմումը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, ապա չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու)

համար հիմք համարվող տեղեկատվությունն ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:

Տեղեկացնում եմ, որ խնդրո առարկա կարգավորումները նախատեսված են կենսաթոշակային ոլորտում վարվող քաղաքականության կարևոր խնդիրների լուծման նպատակով: Այդ խնդիրների լուծումներն արտացոլված են պետական կենսաթոշակային քաղաքականության սկզբունքներում, որոնք սահմանված են Օրենքով: Մասնավորապես, կենսաթոշակային քաղաքականության սկզբունքներից է կենսաապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի պետական կենսաթոշակի նվազագույն չափ ապահովելը:

Սա նշանակում է, որ կենսաթոշակային ապահովության ոլորտում վարվող քաղաքականությունը նպատակ ունի առաջնահերթ ապահովել Հայաստանի Հանրապետությունում գտնվող կենսաթոշակառուների կյանքի որակի բարելավումը՝ արժանապատիվ կենսաթոշակի միջոցով և կենսաթոշակառուի՝ տարեկան մեկ անգամ Հայաստանի Հանրապետությունում լինելու օրենսդրական պահանջը գործիքակազմ է, որն ապահովում է այս նպատակի հասանելիությունը:

Կենսաթոշակի վճարումը վերսկսելիս անցած՝ մեկ տարուց ավելի ժամանակահատվածի համար կենսաթոշակի վճարման վերաբերյալ Ձեր առաջարկությունը չի բխում կենսաթոշակային քաղաքականության մեկ այլ սկզբունքից, այն է՝ պետական կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը և զարգացումն ապահովելը:

Ելնելով վերոգրյալից՝ կենսաթոշակառուի՝ տարեկան մեկ անգամ Հայաստանի Հանրապետությունում լինելու օրենսդրական պահանջը, ինչպես նաև անցած ժամանակահատվածի համար մեկ տարուց ավել (մեկ տարվա ժամանակահատվածի փոխարեն) կենսաթոշակի վճարումը վերանայելը չի բխում ոլորտում վարվող քաղաքականության գաղափարաբանությունից:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՅԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **ԱՆԱՀԻՏ ԳԱԼՍՏՅԱՆ**

X _____

Կատարող՝ կենսաթոշակային ապահովության
և այլ դրամական վճարների բաժին
Արմինե Բալյան, 010 54 27 96

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի հայտարարությունը Երևանում հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման վերաբերյալ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան, միավորելով 18 ճյուղային հանրապետական արհմիություններ, որոնցում ընդգրկված են 587 արհեստակցական կազմակերպություններ մոտ 200 000 արհմիության անդամներով, իր մտահոգությունն է հայտնում Երևանի ավագանու կողմից Երևանում նախատեսվող հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման նախագծի առնչությամբ, որն անշուշտ ծանր սոցիալական հետևանքներ կունենա մայրաքաղաքի բնակչության տարբեր խմբերի համար:

ՀՀ վիճակագրական կոմիտեի վերջին տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բնակչության 24.8 %-ն աղքատ է: Աղքատների շրջանում կան նաև աշխատող աղքատներ, ովքեր, անգամ աշխատելով չեն կարողանում ապահովել իրենց և իրենց ընտանիքի անդամների նվազագույն կենսական պահանջմունքները:

Հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացումը բացասական ազդեցություն է թողնելու աշխատողների զգալի մասի եկամուտների վրա, քանի որ Հայաստանի Հանրապետությունում չի կիրառվում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 182-րդ հոդվածի պահանջը՝ «Աշխատավարձի ինդեքսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Չի կիրառվում նաև դեռևս 2004 թվականին ընդունված «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն՝ կենսաապահովման նվազագույն բյուջեի մեծությունը պետք է հիմք հանդիսանա նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերի սահմանման համար:

ՀՀ վիճակագրական կոմիտեի վերջին տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 741 571 աշխատողներից 521 318-ը աշխատում են Երևանում, հետևաբար նրանց զգալի մասն օգտվում է հասարակական տրանսպորտից:

Ակնհայտ է, որ Երևանում հասարակական տրանսպորտի համակարգում կատարված փոփոխություններից հետո հասարակական տրանսպորտը դեռևս չի ապահովում քաղաքացիների համար սպասարկման նվազագույն բավարար որակ: Տրանսպորտի ուղեվարձի արժեքը պետք է սահմանված լինի այնպես, որ նպաստի անձնական տրանսպորտային միջոցներով երթևեկելուց հրաժարվելուն և քաղաքային տրանսպորտով երթևեկելուն, նկատի ունենալով, որ տրանսպորտային ցանցի բարեփոխումների նպատակներից է նաև մայրաքաղաքի երթևեկության բեռնաթափումը անձնական տրանսպորտային միջոցներից ։

Տրանսպորտային միջոցները և դրանց ցանցը պետք է լավարկվեն հարկատուների կողմից վճարված հարկերի հաշվին: Ազգաբնակչության ուսերին լրացուցիչ բեռ դնելը կհանգեցնի քաղաքացիների շրջանում լրացուցիչ սոցիալական լարվածության առաջացման, ինչը հղի է անկանխատեսելի հետևանքներով:

Մինչև վերոնշված իրավական ակտերի կիրառումը և Երևանում հասարակական տրանսպորտի սպասարկման որակի բարձրացումն ու տրանսպորտային ցանցի բարելավումը, մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացումն անընդունելի ենք համարում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան կոչ է անում Երևանի ավագանուն զերծ մնալ մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացումից:

ՀԱՄԿ-ի նախագահ
Էլեն Մանասերյան

«Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» «Արհեստակցական միությունների մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», « Գործատուների կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների նախագծերի քննարկում

Արդեն տևական ժամանակ է ՀՀ կառավարությունը նախաձեռնել է «Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Արհեստակցական միությունների մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների և «Գործատուների կազմակերպությունների մասին» նոր օրենքի քննարկումը:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից ներկայացված առաջարկներն ու դիտողությունները լսելու, ինչպես նաև դրանք քննարկելու նպատակով 2024թ. մարտի 12-ին Աշխատանքի միջազգային կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գրասենյակի Աշխատանքի միջազգային ստանդարտների և Աշխատանքային իրավունքի մասնագետ Միրանդա Ֆաջերմանը հանդիպեց ՀԱՄԿ-ի ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացքում ՀԱՄԿ-ի ներկայացուցիչները մանրամասն ներկայացրին նախագծերի վերաբերյալ արհմիությունների առաջարկներն ու մտահոգությունները, ինչպես նաև միավորման ազատության և կոլեկտիվ բանակցություններ վարելու իրավունքների իրականացման ընթացքում հանդիպող իրավական խոչընդոտները, մասնավորապես՝

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքը արհմիության ներկայացուցիչների վրա տարածելու, արհեստակցական կազմակերպությունների պետական գրանցման համար սահմանված պետական տուրքերի, գործադուլի, ԱՄԿ 190 կոնվենցիայի վավերացման և այլ հարցեր:

Տիկին Ֆաջերմանը խոստացավ հաշվի առնել ՀԱՄԿ-ի կողմից բարձրացված հարցերը ՀՀ կառավարության ներկայացուցիչների հետ նախագծերի քննարկման ընթացքում:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի այցը Հադրութի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը և Արցախի արհմիության ներկայացուցիչ Արա Ղահրամանյանն այցելեցին Երևանում գործող Հադրութի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ծանոթանալու Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների հետ, ովքեր աշխատում են կենտրոնում:

Հադրութի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի տնօրեն Իրա Թամրազյանը ծանոթացրեց աշխատողների աշխատանքային պայմանների հետ, ներկայացրեց կենտրոնում տիրող իրավիճակն ու առկա խնդիրները:

Կենտրոնը Հայաստանում գործում է շուրջ երեք տարի, ունի մի քանի մասնաճյուղեր, առկա է 47 խումբ, որտեղ հաճախում են շուրջ 420 երեխա Երևանում և տարբեր մարզերում: Կենտրոնն ունի 26 աշխատակից, հիմնականում կանայք են, որոնց համար անասելի կարևոր է կենտրոնի գործունեությունը, քանի որ 2023թ բռնի տեղահանումից հետո սա նրանց հիմնական աշխատանքային զբաղվածությունն է:

Կենտրոնի աշխատանքների կազմակերպման և աշխատող կանանց աշխատանքային պայմաններն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Աշխատանքի միջազգային կազմակերպության համատեղ ծրագրի շրջանակներում Կենտրոնին կտրամադրվի աջակցություն:

Քաղաքացիական հասարակության ներգրավման տարածաշրջանային մեխանիզմ քաղաքացիական հասարակության հարթակի 2024 թվականի ֆորումին մասնակցություն
ԺՆԵՎ, Շվեյցարիա

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի իրավաբան Աննա Բարիկյանը որպես Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի պատվիրակության անդամ մասնակցել է 2024 թվականի մարտի 12-ին Քաղաքացիական հասարակության ներգրավման տարածաշրջանային մեխանիզմ քաղաքացիական հասարակության հարթակի 2024 թվականի ֆորումին:

Ֆորումի ընթացքում Աննա Բարիկյանը խոսել է Հայաստանում ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների իրականացման վերաբերյալ կամավոր ազգային զեկույցի պատրաստման գործընթացում արհմիությունների մասնակցության մասին:

ՄԱԿ եվրոպական տնտեսական հանձնաժողովի Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) տարածաշրջանային ֆորումին մասնակցություն Ժնև, Շվեյցարիա

Համաեվրոպական տարածքային խորհրդի պատվիրակության անդամ, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի իրավաբան Աննա Բարիկյանը մասնակցել է 2024 թվականի մարտի 13-ից մարտի 14-ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում տեղի ունեցող ՄԱԿ եվրոպական տնտեսական հանձնաժողովի Կայուն զարգացման նպատակների տարածաշրջանային ֆորումին:

Ֆորումի համանախագահող է ընտրվել ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը:

Ֆորումի ժամանակ քննարկվել են հետևյալ Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ).

ԿԶՆ 1 Աղքատության վերացում, ԿԶՆ 2 Սովի վերացում, ԿԶՆ 13 Գործողություն հանուն կլիմայի, ԿԶՆ 16 Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ, ԿԶՆ 17 Գործընկերություններ հանուն նպատակների:

ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի 4-րդ հանդիպում

ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի 4-րդ հանդիպումը տեղի է ունեցել 2024 թվականի մարտի 14-ին Երևանում, որին մասնակցում էին նաև Հայաստանում ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը, փոխվարչապետի խորհրդական Կարեն Նազարյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարության Եվրոպայի վարչության պետ Սամվել Մկրտչյանը: Վերջիններս ներկայացրեցին ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) կատարման հետ կապված տեղեկատվություններ:

Հանդիպման ընթացքում քննարկվեց CEPA-ի կատարման ընթացքը: Հարթակի ներկայացուցիչները շեշտեցին ռեֆորմների ավելի գործուն, շոշափելի և օպերատիվ իրականացման անհրաժեշտությունը՝ Հայաստանի եվրոպական ձգտումների զուգահեռ, նշելով, որ CEPA համաձայնագրի կատարման ծավալը զգալի հետ է մնում ստանձնած պարտավորությունների ու վերջնաժամկետների համատեքստում: Մտքեր փոխանակվեցին Եվրոպական սոցիալ-տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների, ինչպես նաև Եվրախորհրդարանի պատգամավոր, Հարավային կովկասի հարցերով պատվիրակության Մարինա Կայյուրանդի հետ:

Քննարկվեցին նաև Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների և օրենքի գերակայության վիճակը, մասնավորապես իրավապահ համակարգում բարեփոխումների ընթացքը և դրանց թերությունները: Առանձին քննարկում ծավալվեց CEPA գյուղատնտեսության և տարածքային զարգացման մասին դրույթների իրականացման մասին:

Հանդիպման արդյունքներով ընդունվեց համատեղ հռչակագիր: Հռչակագրում, ի թիվս այլ հարցերի, նշվում է, որ.

- անհրաժեշտ է ավելի ներառական կերպով ներգրավել քաղաքացիական հասարակությանը CEPA կատարման և մշտադիտարկման գործընթացին,
-Կառավարությունը պետք է ավելի ինտենսիվ ջանքեր գործադրի նվազեցնելու տնտեսական, ենթակառուցվածքային, քաղաքական, էներգետիկ և պաշտպանական կախվածությունը ՌԴ-ից և այլ ավտորիտար երկրներից, բարելավի արտաքին առևտուր ԵՄ-ի հետ, այդ թվում՝ պետգնումների և միջազգային ներդրումների համատեքստում,
- պետք է արագացվի աշխատանքային հարաբերությունների, սննդի, շրջակա միջավայրի և սպառողների պաշտպանության ոլորտում պետական հսկողության և վերահսկողության հետ կապված բարեփոխումները, այդ թվում՝ պատշաճ ներդնելով միջազգային պարտավորությունները,
- առողջապահական համապարփակ ապահովագրությունը ներդնելուց պետությունը պետք է հաշվի առնի սոցիալական համերաշխության և սոցիալական արդարության սկզբունքները և դրա ֆինանսավորումը չդնի միայն աշխատողների ուսերին,
- անհրաժեշտ է հապճեպ և գործուն միջոցներ ձեռնարկել պաշտպանելու ՀՀ աշխատանքային միգրանտներին կազմակերպված տեղափոխման, ապօրինի աշխատանքային հարաբերություններում շահագործելու և վտանգավոր պայմաններում կեցությունից՝ միաժամանակ նույնացնելով և պատժելով դրանում ներգրավված հանցավոր ցանցերի ներկայացուցիչներին,
- հարկավոր է վերագործարկել դիսֆունկցիոնալ սոցիալական երկխոսությունը՝ առաջնորդվելով միջազգային պարտավորություններով և ժողովրդավարության սկզբունքներով:

ԱՄԿ Աշխատավորների գործունեության բյուրոյի (ԱԿՏՐԱՎ) և Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի աշխատանքի անվտանգության փորձագետների հանդիպում

Ամբողջական նյութին կարող եք ծանոթանալ՝ հետևելով հղմանը
https://perc.ituc-csi.org/ACTRAV-and-PERC-OSH-experts-meeting

2024 թվականի մարտի 20-ից 21-ը Համաեվրոպական տարածաշրջանային խորհուրդը ԱՄԿ Աշխատավորների գործունեության բյուրոյի (ԱԿՏՐԱՎ) հետ համատեղ և «Uniontounion»-ի ֆինանսական աջակցությամբ կազմակերպել է աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանման համար պատասխանատու արհմիութենական փորձագետների ցանցային հանդիպում Մոլդովայի Քիշնև քաղաքում:

Հանդիպման ընթացքում Աշխատավորների գծով ԱՄԿ ԱԿՏՐԱՎ-ի ավագ մասնագետ Վիկտոր Հյուգո Ռիկկոն ներկայացրեց կանոնակարգային բազան, մասնավորապես 1981 թ. «Աշխատանքի անվտանգության և առողջության մասին» կոնվենցիան (թիվ 155) և 2006 թ. «Աշխատանքի անվտանգության և առողջության խթանման մասին» կոնվենցիան (թիվ 187), ինչպես նաև ԱՄԿ-ի բոլոր անդամ պետությունների համապատասխան պարտավորությունները և արհմիությունների համար համապատասխան ուղիները:

Հանդիպմանը հատուկ ուշադրություն է դարձվել Աշխատանքի միջազգային կոնֆերանսում այս տարի կայանալիք կենսաբանական վտանգներից պաշտպանության նորմերի առաջին քննարկմանը: Վիկտոր Հյուգո Ռիկկոն ներկայացրեց ստանդարտների հաստատման գործընթացը և Բյուրոյի նախապատրաստական աշխատանքը :

Կլոր սեղանին մասնակիցները ներկայացրեցին իրենց կազմակերպությունների աշխատանքը աշխատանքի առողջության և անվտանգության ոլորտում ՝ շեշտը դնելով կենսաբանական վտանգների վրա:

Խմբային աշխատանքի ընթացքում մասնակիցները ձևակերպել են առաջարկություններ և գործողությունների առաջարկներ Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի, Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի և ԱԿՏՐԱՎ-ի համար:

Հանդիպումը եզրափակել է ԱՄԿ ԱԿՏՐԱՎ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի համակարգող Սերգեյուս Գլովացկասը:

«Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար Կրթության և գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության Արաբկիրի տարածքային կրթության և գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպության անդամների համար

ԱՄԿ-ն պաշտոնապես համաձայնվել է կենսապահովման աշխատավարձի սահմանման հետ, որը Նոր սոցիալական պայմանագրի էական մասն է, որպեսզի վերաձևավորի համաշխարհային տնտեսությունը՝ ծառայելու աշխատավոր մարդկանց շահերին

Համաձայնագիրը, որը ձեռք է բերվել փետրվարին աշխատավարձային քաղաքականության հարցերով փորձագետների եռակողմ հանդիպման ժամանակ, հավանության է արժանացել ԱՄԿ-ի ղեկավար մարմնի կողմից մարտի 13-ի նիստում:

Նոր սահմանմամբ կենսապահովման աշխատավարձն «աշխատավարձի մակարդակն է, որն անհրաժեշտ է աշխատողների և նրանց ընտանիքների համար արժանապատիվ կենսամակարդակ ապահովելու նպատակով՝ հաշվի առնելով երկրի հանգամանքները և հաշվարկված նորմալ ժամերին կատարվող աշխատանքը»:

ԱՄԿ-ի համաձայնագիրը շեշտում է կարևոր դերերը, որոնք պետք է ունենան աշխատավարձերը սահմանող լիազորված հաստատությունները ու գործիքները, մասնավորապես սոցիալական երկխոսությունը և կոլեկտիվ բանակցությունները, և ընդգծվում է, որ կառավարությունները և սոցիալական գործընկերները պետք է «ապահովեն նվազագույն աշխատավարձից կենսապահովման աշխատավարձի աճող առաջընթացը»:

Այն նաև սահմանում է կենսապահովման գնահատման մի քանի հիմնական սկզբունքներ, այդ թվում՝

- ապացույցների վրա հիմնված մեթոդոլոգիաների և հստակ տվյալների կիրառում, որոնք թափանցիկ են և հասանելի հանրությանը,
- սոցիալական գործընկերների հետ խորհրդակցություն,
- կենսապահովման աշխատավարձի ծախսերի փոփոխություններն արտացոլելու համար կանոնավոր ճշգրտումներ՝ հաշվի առնելով տարածաշրջանային և սոցիալ-տնտեսական իրողությունները:

Բացի այդ, ԱՄԿ-ից պահանջվում է աջակցել կառավարություններին և սոցիալական գործընկերներին ապացույցների վրա հիմնված կենսապահովման աշխատավարձի սահմանման հարցում: Սա ներառում է կենսապահովման աշխատավարձի վերաբերյալ քննարկումների համար տվյալների հավաքագրում, կենսապահովման աշխատավարձը որոշելու համար տեխնիկական աջակցություն և անհրաժեշտության դեպքում համապատասխան տնտեսական պայմանների գնահատում:

Համաձայնագիրն ակնկալում է ավելի մեծ համահունչ ընթացիկ ազգային և միջազգային նախաձեռնություններ՝ ուղղված կենսապահովման աշխատավարձի սահմանմանը, գնահատմանը և տրամադրմանը:

ԱՄԿ-ի գլխավոր քարտուղար Լյուկ Թրիանգլը ողջունել է համաձայնագիրը. «ԱՄԿ-ում այս համաձայնության հասնելը 80 տարի կենսապահովման աշխատավարձի կարևորությունը անտեսելուց հետո աշխատավորների խոշոր հաղթանակն է: »

«Այժմ, չափազանց շատ աշխատողների համար աշխատավարձը բավարար չէ իրենց և իրենց ընտանիքներին աղքատությունից դուրս բերելու համար, էլ չեմ ասում արժանապատիվ ապրուստ ապահովելու համար»:

«Այս համաձայնագիրը կարևոր քայլ է միջազգային գործողություններով ուղղված կենսապահովման աշխատավարձի ապահովման և նշանակում է առաջընթաց սոցիալական արդարության ոլորտում»:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի խորհրդի նիստ

2024թ մարտի 29-ին տեղի ունեցավ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի խորհրդի նիստ, որին մասնակցում էին 53 խորհրդի անդամներից 43-ը: Խորհրդի անդամները ներկայացնում են ՀԱՄԿ-ին անդամակցող 18 ճյուղային հանրապետական միությունները:

Խորհրդի նիստի ժամանակ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը ներկայացրեց 2023թ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետվությանը կարող եք ծանոթանալ՝ հետևելով հղմանը. https://rb.gy/zfmc25

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3
Հեռ.՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am